Այս պայմաններ նշումները անկատար պիտի լլայնեթէ չտեսներ հոն պարոզ եւ ստեղծագործող բանաստեղծներն ու գրագէտները, որոնց գործը հետանկարարին է, նեղ իմաստով համայնքային է, կը նպաստէ հայ գրականութեան հարստացման: Ստեղծագործական երակը չէ հորոգած: Յիշենք անուններ, որոնց գործը մեր մանկուն ժողովրդական մաս կը կազմէ այսօր եւ մաս պիտի կազմէ վաղը, ինչպէս՝ Յակոբ Մանուկի, Զահարատի, Խրախունի, Սարաբալանի, Հատիճեանի: Գործախառնար, Հայաստանի մէջ գրագէտներու սեղմ շրջանակ մը ծանօթ է այս անուններուն եւ կատարուող ճիգին, Սփիւռքի մէջ առաւելաբար պոլսահայերու շրջանակին մէջ հետաբարբրութիւն կայ անոնց նկատմամբ, նոյնիսկ երբ չեն կարդար: Յաւալի է, որ այդ ստեղծագործական արժեքը պոլսահայերու շրջանակին մէջ առաւելաբար արժագանգ կը գտնէ: Ընդ է որ հայկական մամուլը կ'արձագանգէ, բայց գանգուածային հետաբարբրութիւն չկայ:

ԿԵՆՍՈՒՆՈՐՏԱՅԻՆ

ՀԱԿԱՌԱԿ ԷՎ ԵՐԵՍԹԸ ՄԱՔՐԵԼՈՒ ՀՍԿԱՅ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ՝ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԵՆ ԲԱՐՉՐ ԳԱԳԱԹԸ ՍՊԱՌՆԱԼԻՔԻ ՏԱԿ ԿԸ ՄՆԱՅ

Էվերէսթ լեռը, որուն գագաթը մարդիկ առաջին անգամ հասած են 50 տարի առաջ, կրնայ ի վերջոյ կորսնցուցած ըլլալ «աշխարհի ամէնէն բարձր աղբանոց» ի ծածկանունը, սակայն լեռնագնացներու հետզհետէ աւելի մեծ թիւը տակաւին վտանգ կը սպառնայ անոր:

Անցնող 50 տարիներուն աւելի քան 1300 հոգի կանգնած է 8848 մետր բարձրութեամբ լեռան գագաթը:

Այն օրէն, երբ լեռնագնացներ սկսած են գէպի աշխարհի բարձրագոյն կէտը ուղղուել, Էվերէսթը «ծածկուած է» մարդկային նուաճումներուն փաստերով: Թոններով աղբ եւ գագաթին հասնել չկրցած 172 անձերուն մէկ մասին դիակները:

Սակայն մաքրութեան շարք մը արշաւներէ ետք եւ ապականումի հետզհետէ աւելի գիտակցութեամբ, լեռը ի վերջոյ սկսած է վերադառնալ իր նախկին վիճակին:

Ըստ Նեփալի Լեռնագնացութեան Ընկերակցութեան նախագահին՝ Անկ Յերինկ շերփայի, լեռը ներկայիս «շատ մաքուր է», հարաւային կողմը՝ 8000 մետր բարձրութեամբ «աղբ չկայ այլեւս» եւ «ճամբուն վրայ դիակներ չկան»:

Գնահատումներու համաձայն, 29 Մայիս 1953ին, երբ նոր գեյանտացի լեռնագնաց էտմընտ Ջիլլըրի եւ Թենգինկ Նորկէյ շերփան գագաթը հասած էին, մինչեւ 1990ական թուականներու սկիզբը, երբ մարդիկ սկսած են հարցով զբաղուել, մօտաւորապէս 50 թոն ձգախէժ, ապակի եւ մետաղ նետուած է լեռան վրայ:

1993ին Նեփալի կառավարութիւնը սկսած է տուգանքներ հաստատել լեռնագնացներու համար, որոնք թթուածինի շիշերը եւ կաթի ընդունէն:



Իտալացի Ռայնհոլտ Մեռնըր 1978ին ատարիացի Փեթըր Հապըլըրի հետ դարձած է առաջին անձը, որ առանց յաւելեալ քթուածինի Էվերէսթի գագաթը հասած է:

ԱՄ Ներկայիս «շրթանք, պարանոցներ եւ կաշի կը տեսնէ» իսկալ լեռան շուրջ՝ զգուշացնելով Նեփալի կառավարութիւնը, թէ Էվերէսթ «իր ուժը կորսնցնելու ընթացքին մէջ կը գտնուի» ու պետք է պաշտպանել գայն:

նէ ան, տակաւին շատ աշխատանք կայ:

«Գլխաւոր հարցը այն է, թէ յաւելեալ արշաւներ կան», հետեւաբար աղբը ինքնաբերաբար պիտի աւելնայ:

Ան կը յայտնէ, որ լեռնագնացներու համար, որոնք երբեմն իրենց կեանքը փրկելու նպատակով պայքար պէտք է մղեն, Էվերէսթի ապագայ պահպանումը կրնայ երկրորդական մտահոգութիւն մը ըլլալ:

«Երբ մարդ կը մտի, յոգնած է եւ բարձրութեան պատճառով հիւանդ է, ան միայն կեանքը փրկել կ'ուզէ», կը բացատրէ ան:

ՀԻԼՐԻ ԷՎ ԵՐԵՍԹԻ ՓՈՓՈՒՆՈՒԹԻՆՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ ՅԱՆ ԿԸ ՅԱՅՏՆԷ

29 Մայիս 1953ին Թենգինկ Նորկէյ շերփայի հետ Էվերէսթի գագաթը հասած առաջին անձը դարձած էտմընտ Ջիլլըրի անցեալ շաբաթ քննադատած է առեւտրական բազմաթիւ լեռնագնացներ, որոնք այսօր մեծ գումարներ կը վճարեն, որպէսզի ուրիշներու օժանդակութեամբ աշխարհի ամէնէն բարձր գագաթը հասնին:

Ան ըսած է, թէ լեռնագնացութիւնը մարտահրաւէր մըն է լեռան եւ լեռնագնացին միջեւ, ամբաստանելով կարգ մը անձեր՝ վճարելով գագաթը:



Նոր գելանտացի էտմընտ Շիլըրի եւ Թենգինկ Նորկէյ շերփան 29 Մայիս 1953ին հասած են Էվերէսթի գագաթը: Աշխարհամարտէն առաջ Լեռնագնացներու բոլոր խմբակները ստիպուած էին Էվերէսթի մօտեմալ Թիպթի կողմէն, որովհետեւ Նեփալը փակ էր օտարներուն դիմաց:

Սակայն 1950ական թուականներու սկիզբը կացութիւնը շրջուած է. Թիպթի դարձած է արգիլեալ գօտի գրանուելէ ետք Չինաստանի կողմէ, մինչ անցեալին փակ Նեփալի թագաւորութեան դռները կը սկսէին բացուիլ: Լեռան աւելի դիւրին հարաւային կողմէն նոր արշաւներու յաջողութիւնը ժամանակի հարց էր միայն:

Շիլըրի հետեւեալ ձեւով կը նկարագրէ այն պահը, երբ դարձած է աշխարհի բարձրագոյն գագաթը հասած առաջին անձը. «Ապա որոշ չափով տափակ ձիւնով ծածկուած բաժնի մը վրայ կեցայ. շուրջս ամէն ուղղութեամբ բացութիւններ էին միայն: Թենգինկ արագօրէն ինձի միացաւ եւ հարցական մեր շուրջը դիտեցինք ու գոհունակութեամբ անդրադարձանք, թէ աշխարհի գագաթը հասած ենք»:

Անցնող 50 տարիներուն աւելի քան 1300 հոգի նուաճած է բարձրագոյն գագաթը:

Թին հասնելու յանցանքով:

Ըստ Ջիլլըրիի ստիպած մէնէն կարեւոր փոփոխութիւնն է Թենգինկ Նորկէյ շերփային հետ 1953ի իր արշաւէն ի վեր:

«Մարդոց 65 հազար տոլար վճարել, ապա 2 փորձառու առաջնորդներու հետ ուղղուել դէպի գագաթ, նուազ գրաւել է իմ կարծիքովս եւ լեռնագնացութիւն չէ, ըսած է ան:

Միւս կողմէ, սակայն, յայտնած է Ջիլլըրի, տեղացի շերփաներու կենսամակարդակը շատ մեծ համեմատութեամբ բարելաւուած է, նկատի ունենալով, որ շատ աւելի մեծ թիւով մարդիկ կ'այցելեն շրջանը:

Ան դիտել տուած է, որ դպրոցներ եւ հիւանդանոցներ կառուցուած են եւ ըմպելի ջուր կը մղուի ներկայիս գիւղերը:

Այս շահերը շատ աւելի զբօսաշրջութեանն է հեղինակը, քան՝ միայն լեռնագնացութեանն, ըստ Ջիլլըրիի:

Ան զգուշացուցած է, թէ օտարներ պէտք է առաւելագոյն չափով ուշադիր ըլլան կենսոլորտի պաշտպանութեան՝ խօսելով յատկապէս զբօսաշրջիկներու կողմէ անտառահատումի մասին: Թէեւ ատիկա ներկայիս ապօրինի է, սակայն կը շարունակուի տակաւին կարգ մը մարդոց կողմէ:

ԷՎ ԵՐԵՍԹԸ «ՇՂԹԱՅԱԿԱՊՈՒՄԸ Է», Կ'ԸՍԷ ՄԵՌՆԸՐ

Անցեալ շաբաթ այլ լեռնագնացներու կողքին Նեփալ գտնուող իտալացի լեռնագնաց Ռայնհոլտ Մեռնըրը նոյնպէս ահա-գանգ հնչեցուցած է Էվերէսթի մասին՝ յայտնելով, թէ անիկա «շրթայակապուած է եւ իր ուժը կորսնցնելու ընթացքին մէջ կը գտնուի»:

Երրորդարդարանի «կանաչ» անդամ Մեռնըր 1978ին ատարիացի Փեթըր Հապըլըրի հետ դարձած է առաջին անձը, որ առանց յաւելեալ թթուածինի Էվերէսթի գագաթը հասած է: Երկու տարի ետք ան նոյն բանը ըրած է, սակայն՝ առանձինն:

Մեռնըր անցեալ շաբաթ քննադատած է Նեփալի կառավարութիւնը, որ աշխարհի բարձրագոյն լեռը կը շահագործէ: Լեռնագնացը կոչ ուղղած է անոր, որ տարեկան հազարաւոր մարդիկ չըրկէ Էվերէսթ, դիտել տալով, որ այդ հսկայ լեռան շուրջ «շրթանք, պարանոցներ եւ կաշի դրած էք», եւ թէ անիկա «իր ուժը կորսնցնելու ընթացքին մէջ կը գտնուի»:

Ըստ Մեռնըրի, Նեփալի կողմէն դէպի Էվերէսթի գագաթը գոյութիւն ունեցող 6 կամ 7 ճամբաներուն համար տարեկան միայն մէկ արտօնագիր պէտք է տրուի եւ միայն անոնց, որոնք աւելի ցած գագաթներու փորձառութիւնը ունին:


«Ինչո՞ւ արեւմտեան մեծ քաղաքներէ մարդիկ պէտք է ուղղակի Էվերէսթի գագաթը հասնին», հարց տուած է ան՝ դիտել տալով, որ այդ հսկայ լեռը «զբօսաշրջիկներու մայրուղիի մը» նման բան մը դարձած է:

ԷՎ ԵՐԵՍԹԻ ԺՈՂՈՎՐՈՂԱԿԱՆՈՒՄԸ ԿԵՆՍՈՒՆՈՐՏԻ ԿՐՈՒՄԸ ԵՂՁԻՑՆԵՐ Է: ԶԲՕՍԱՇՐՋԻԿՆԵՐՈՒ ԾՈՒՆԵՐԸ ԵՂՁԻՑՆԵՐ ԵՂՁԻՑՆԵՐ ԵՂՁԻՑՆԵՐ

Բացի լեռնագնացներու 172 դիակներէ, աղբի քանակութիւնը վրան, քթուածինի շիշ, ուտելիքի տուփեր, տոպրակներ..., 50 թոնով կը գնահատուի Նեփալի զբօսաշրջութեան նախարարութեան կողմէ: (Կ'ենթադրուի, թէ այս թիւը նկատի չունի 1973ին ջախջախուած իտալական ուղղաթիւ մը):

Կառավարութիւնը, որ 2001ին 19 խմբակներու գործակցութեան դիմած է՝ շերփաները խնդրելով, որ լեռը մաքրեն աղբերը, նաեւ տուգանք հաստատած է այն լեռնագնացներուն համար, որոնք իրենց սարքերն ու աղբերը իրենց հետ չեն վերադարձնել:

Նկարին վրայ ձափոցի լեռնագնաց եւ Արքըն 2001 Քոմպլեքսմա Քլեմափ առաջնորդութեան ղեկավար Էլեն Նոկուչի (ձախիմ) եւ հարաւային քորեացի անդամ մը՝ Լի Սանկ - Պէյ, ցոյց կու տան 2001ին լեռնին իրենց հաւաքած 1600 քկ. աղբին մէկ մասը:



Աշխարհի բարձրագոյն լեռը 1865ին պաշտօնապէս Էվերէսթ կոչուած է ի պատիւ բրիտանացի գնդապետ ճորձ Էվերէսթի, որուն խմբակը 1852ին առաջին անգամ գագաթ 15ին քարտեզ պատրաստած է:

Նեփալցիք 8848 մետր բարձրութեամբ լեռը կը կոչեն Սակարմաթա (Երկինքի Աստուածուհի), թիպթիքը՝ Չոնուլունկա (Աշխարհի մայրը): Սակայն Չինաստանի պաշտօնական դասակարգը կ'ուզէ թիպթական անունը վերածել Զոնուլանկա մայի:

Չինացիք արշաւի մը ձեռնարկած են, որպէսզի արեւմուտքից դադարեցնեն լեռը Էվերէսթ կոչելէ եւ յառաջիկայ տարուին սկսեալ գայն կոչել չինական պաշտօնական անունով:

«Բրիտանացի գաղութատէրերը թիպթիցներու սուրբ լեռը բռնաբարած են՝ անոր կեղծ անուն մը տալով», կ'ըսէ չինական պաշտօնական տեղեկագիրը:

Մասնագետներու համաձայն, անոնք իրաւունք ունին եւ ասիկա երկար ատենէ ի վեր ընդունուած է: ճորձ Էվերէսթի յաջողող՝ Անտրու Մքթ Կո, որ լեռը դիվանագիտութեամբ կոչած է Էվերէսթի անունով, 1856ին դրած է, թէ իր նախորդ իրեն թելադրած է, որ՝ «աշխարհագրական իւրաքանչիւր վայր կոչել իր իսկական եւ տեղական անունով»:

Ան նկատի ունեցած է տեղական Տեւտիանկա, որ Նեփալցիներով կը նկարագրէ գագաթներու խմբակը, որուն մաս կը կազմէ Էվերէսթը. սակայն ան մերժած է այդ անունը՝ «անորոշ եւ ոչ յաջող նկատելով» եւ որոշած է լեռը Էվերէսթ կոչել:

Մեռնըր առաջին լեռնագնացն է, որ 8000 մետրէն բարձր աշխարհի 14 գագաթները բարձրացած է:

Նեփալի կառավարութիւնը անցեալ շաբաթ յիսնամեակին առիթով յայտարարած է, թէ տակաւին զբօսաշրջիկներու այցելութիւնը շատացած Հիմալայեան 50 գագաթներ պիտի բանայ Էվերէսթի վրայ ճնշումները նուազեցնելու նպատակով:

ԷՎ ԵՐԵՍԹԻ ԺԱՅՈՒՆԻՆ ԲԱՐՅԵՄԸ ՀՐԱՏԱՐԱՎՈՒՄԸ

Հակառակ անոր որ անցնող 50 տարիներուն աւելի քան 1000 հոգի բարձրացած է Էվերէսթի գագաթը, անոնցմէ ոչ մէկը մտածած է արձանագրել ոտքերուն տակ գտնուող ժայռերու տեսակները: Սակայն այժմ, շրջանը 6 տարի հետախուզելէ ետք, Բրիտանիոյ Օքսֆորտ համալսարանի երկրաբաններէն տեղեկ. Մայք Ըրըլ լեռան առաջին երկրաբանական քարտէսը գծած է:

Քարտէսը, որ կը ներկայացնէ շուրջ 1500 բառակուսի քիմութիւն շրջան մը, եւ որ կ'ընդգրկէ Նեփալ - Թիպթի սահմանը, ցոյց կու տայ, թէ աշխարհի բարձրագոյն գագաթին բարձրագոյն ժայռերը շուրջ 400 միլիոն տարի առաջ ոչ շատ խորունկ արեւադարձային ծովու մը մէջ կը գտնուէին:

Սրբը կ'ըսէ, թէ Էվերէսթի ժայռերը իւրայատուկ են միլիոնաւոր տարիներու ընթացքին անոր կազմութեան ձեւին պատճառով:

Գետնի վրայ ժայռերու տեսակները ճշգրիտ կողքին, ան հաւաքած է 400 բեկորներ՝ քիմիական քննութիւններու համար եւ ուսումնասիրած օդանաւերով եւ արբանակներով առնուած նկարներ՝ անհասանելի վայրերու քարտէսը պատրաստելու համար:

Պատրաստեց՝ Ս. Ա. ՊՈՅԱՃԵԱՆ (Արքիւրներ՝ «ԱՅՓ», «ՈՂՅԵՐՁ») «Պ. Պ. Ս.» ԵՒ «ՖՈՔՍ»



Չերփա մը Էվերէսթն ի վեր սարքեր կը փոխադրէ: Չերփաները լեռը բարձրացող անձերու ընդհանուր թիւին մէկ չորրորդը կը կազմեն եւ լեռան վրայ մահացողներուն՝ մէկ երրորդը:

Չերփաները լեռնագնացութեան բնախօսական յարմարութիւնը կրնայ մասամբ ծինի մը շնորհիւ ըլլալ: Անիկա այդ մարդոց արեւան առիթ կու տայ յաւելեալ քթուածին փոխադրելու:

«ՄԱՅՐԵՐՈՒ ՕՐ»ՈՒԱՆ ...

Ծարուհակուած՝ 4րդ էջէն

հայրը տան սիւնն է, տու-
նը կանգուն պահողը, իսկ
մայրը՝ տան օճախը, տու-
նը տաքացնողը, սէր ու
գուրգուրանք փոխանցողը:
Սրբազան հօր հոգե-
գրաւ եւ ջերմիկ խօսքէն
ետք, կատարուեցաւ յու-
շանուէրներու յանձնումը
այն մայրերուն, որոնք

իրենց ամուսիններու վա-
ղահաս մահուան պատճա-
ռով, ստանձնած են իրենց
զաւակներուն (ղեռ պա-
տանեկան տարիքը հազիւ
թեւակոխած) հոգատա-
րութիւնը՝ ցուցաբերելով
անկուն կամք, անսպառ
զոհողութիւն, կորով եւ
քաջութիւն:
Մեծարող ինք մայրե-

րը յաջորդաբար կտրեցին
«Մայրերու օր»ուն շնոր-
հաւորական կարկանդա-
կը, որ նուիրուած էր ՀՕ-
Մի Բուէյթի Մեկուսի
Մասնաճիւղի ընկերային
յանձնախումբին կողմէ:
Համադամ ճաշէն,
քաղցրեղէններէն եւ կար-

կանդակէն ետք, ընկերա-
յին յանձնախումբին կազ-
մակերպութեամբ տեղի
ունեցան զանազան խա-
ղեր, որոնցմէ յիշատակու-
թեան արժանի է «Բախ-
տաւոր մօր» հրամայում
փունջը մը քաղցր խօսքերը
դպրոցական ութ աշա-
կերտներու կողմէ:

ԹՈՒՐԲՈՅ ԿՐԹՈՒԹԵԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ...

Ծարուհակուած՝ 5րդ էջէն

նութիւն կը վարէ. այս
նիւթին հակամէտ համա-
լսարաններու մէջ իմքակ-
ներ կազմաւորել, անոնց
ստիպել, որ «հետզօտու-
թիւններ» կատարեն, ար-
տասահմանէն ընտրել
այնպիսի ակադեմական-
ներ, որոնք նեցուկ կը
կանգնին իրենց կողմէ
ընտրուած գաղափար-
ներուն ունին համացան-
ցի կաշիքեր... որոնք այն-
քան բովանդակալից են,
որ յստակ է, թէ մէկ հա-
մալսարանի կամ հասարա-
կական մէկ կազմակեր-
պութեան կատարած աշ-
խատանքին արդիւնքը
չեն»: Ինչ կը վերաբերի
կրթութեան նախարարու-

թեան որոշումին, Չելիք-
ջան գրած է. «Արդեօք
զուր չէ՞ք սարսափիւր
կրթական այս ազգայնա-
պաշտ նախաձեռնութեան
դիմաց, որ օրակարգի կը
բերուի փոքրիկ մասնու-
կներու ուղեղներուն մէջ
խտրականութիւն ու
թշնամութիւն սերմանե-
լու նպատակով: Կոչ կ'ուղ-
ղեմ, որ ցեղապաշտու-
թեան եւ խտրականու-
թեան դէմ եղող բոլոր
կազմակերպութիւնները
իրենց խնդիրը դարձնեն
այս հարցը: Թուրք ժողո-
ւորը պիտի չարտօնէ,
որ իր զաւակները զոհե-
րթան ասանկ զրգուութիւն-
ներու եւ քարոզչութեան»:

ՍԱԿԱՐԱՆ

Table with 2 columns: Item name and Price. Items include various types of flour (Պէլլուրի սակարանից մէջ օտար դրամացիներու փակման սակազները), oil (Արդեօք չէ՞ք սարսափիւր կրթական այս ազգայնապաշտ նախաձեռնութեան դիմաց), and other goods.

Table with 2 columns: Item name and Price. Items include various types of oil (Անգլիական մէկ ոսկի իրանեան մէկ ոսկի), flour (Օսմանեան մէկ ոսկի), and other goods.

ՍՈՍԿԻ
Անգլիական մէկ ոսկի 140,000 - 145,000 լ.ն.
Իրանեան մէկ ոսկի 126,000 - 131,000 լ.ն.
Օսմանեան մէկ ոսկի 116,000 - 121,000 լ.ն.
Մեքսիքական փէսոս 669,000 - 689,000 լ.ն.
Մէկ քիլոկրամ ձոյլ ոսկի 17,440,000 - 17,640,000 լ.ն.
Մէկ օսու ոսկի 361,000 - 361,50 Տ
Մէկ օսու արծաթ 4,50 - 4,52 Տ
• Ամերիկեան տոլարի փոխանակման սակաքը.
Եւրօ 1.1680 - 1.1685
Քանադական տոլար 1.3750 - 1.3760
Չեխոստական ֆրանք 1.3070 - 1.3080
Ճափոնական եեն 118.71 - 118.75
Մէկ սերիք 1.6273 - 1.6283
Մէկ քիլոպար 535 դրամ
• ՍՈՒԽՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ
Գիւնի Ա. ճշդում Գիւնի Բ. ճշդում
Ա. կարգ 4 7/8 4 7/8
Բ. կարգ
ԼՈՒՄԱՅՈՒՆ ԱՆԵՍԱՆԵԱՆ ՀԵՆ. 01-252852

Advertisement for Auntie Rosa Cafe Restaurant. Includes a photo of a woman in traditional attire and text in Armenian and English. Contact info: Dabayeh - Lebanon - Al Saoud Street, Tel.: 04/544122 - 03/333776 - 03/860188

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5451
Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՐԱԶԱՐԵԱՆ

11x11 grid puzzle with numbers 1-11 in the first row and 1-11 in the first column. Some cells are shaded black.

Two columns of clues for the grid puzzle. Left column: 1. Կանխագէտ - Այսինքն: 2. Խուզարկել - Մեղմ հոզ: 3. Պատկառանք - Յուսկանան անական: 4. Պակսիւր - Կրկնուած բաղաձայններ - Հսկողութիւն: 5. Սպանացի գեղանկարիչ - Կիներ: 6. Ժողովի նախագահ: 7. Թարմութիւնը անցած - Յոգնակերտ մասնիկ - Չուարթ: 8. Հայկական օփերա - Ժամանում: 9. Յուզական անական - Միջնաբերդ: 10. Եղջերուի տեսակ - Կղզանք: 11. Նոսք - Կող - Տառի մը տեղափոխուած դրացիները: Right column: 1. Օժանդակութիւն - Պարտականութիւն: 2. Գանձապահ - Խաղաթուղի մէկնոց: 3. Ամչնալ - Թովչանք: 4. Եւրոպական երկիր - Ուլ: 5. Խոշոր - Նկատելի, նշմարելի: 6. Բագրեւանդ զաւառի կեդրոնը - Կրկնուած ձայնադրոշմ: 7. Հետք - Ամերիկեան պետութիւն: 8. Ստեղծուածներ - Հայկական աղօթագիրք: 9. Աւարկայ - Հօրենական: 10. Կծուահամ հատիկներով համեմ - Ոխ: 11. Հայ գիտնական - Գիշակեր մեծ թուղն:

ԹիՒ 5450
ԽԱՉԲԱՌԻՆ
ԼՈՒԹՈՒԹԱԸ

ՕՐԱՏԵՏՐ
ՓՈՒՍՏՈՐ / ՅՈՒՅԱՀԱՆԴԷՍ / ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹԻՒՆ
ԿԱՊՈՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹԻ
ՆՈՒՒՐՈՒԱԾ ՇԱԲԱԹ՝
3 - 8 ՅՈՒՆԻՍԻՆ

Մինչ Լիբանանի մէջ օտար դեսպանատուներ եւ մշակութային հաստատութիւններ աշխուժօրէն կը կազմակերպեն տրուեալ երկիրներու մշակոյթներու ծանօթացման ու տարածման նպատակով փառատօններ եւ մշակութային շաբաթներ, Լիբանանի մէջ Կապոնի դեսպանատունը եւս կը միանայ անոնց խումբին:

պիտի ներկայացնէ Կապոնի բնութիւնը, ընկերութիւնն ու մշակոյթը: Մշակութային այս շաբաթուան խորագիրն է «Լա մէտրօֆի թրատիսիոնի է սա ռափոր աէք լա մուտերնիթէ» («Աւանդական բժշկութիւնը եւ արդիականութեան հետ անոր աղերս»): Մշակութային շաբաթը կ'ընդգրկէ դասախօսութիւններու, կրոյցներու, ներկայացումներու, ինչպէս նաեւ՝ կապոնական ժապաւէններու ցուցադրութեան շարք մը: Ստորեւ կը ներկայացնենք Կապոնական Մշակութային շաբաթուան յայտագիրը: Նշենք, որ բոլոր ձեռնարկները կը սկսին երեկոյեան ժամը 6:00ին:

Այսօր ուր է սկսեալ յառաջիկայ քանի մը օրերուն լիբանանցի աշխարհի մասին ունենայալի մօտի ծանօթանալու Կապոնի ու անոր մշակոյթին: 3 - 8 Յունիսին Մէն ժուէֆ հա մ ա յ ա ր ա ն ի «Փիեռ Սլուի Խաբէր» արահին մէջ տեղի ունեցող Կապոնական մշակութային շաբաթը շարք մը նախաձեռնութիւններով

Գաախօսութիւն՝ «Լա ֆորէ, սուրս տը փ է տը միսթեր»
Գաախօսութիւն՝ «Սուֆլ տը լա ֆորէ»

4 Յունիս
Գաախօսութիւն՝ «Լա Սուիթէր Սըքըթ տի Պուի»
Գաախօսութիւն՝ «Լէ ֆափ տը լ'Այախուքս»

Գաախօսութիւն՝ «Լէ նուիօ թրածէ թե-րափէթթի»
Գաախօսութիւն՝ «Լէ ֆափ տը լ'Այախուքս»

ԱՅՍՈՐ

Յուցահանդէս «Թու գ'արթիսթ», Գրանսկան Մշակութային կեդրոնին մէջ, մինչեւ 13 Յունիս:
Կապոնական մշակութային շաբաթ՝ ժամը 18:00ին, Մէն ժուէֆ համալսարանի «Փիեռ Ապու Խաբէր» սրահին մէջ:
«Ցեխիվալ Իրախան», Երգահանդէս, Սինգլիս Թիգունի (սոփրանօ) եւ Թոպէրթօ Քառլի (թեմոր), ժամը 18:00ին, Թիփոլիի «Քուալիթի Ինն» պանդոխին մէջ:

Գորգերու ցուցահանդէս «Թափ տը Բոքազ», «Արքաթ» բանգարանին մէջ, մինչեւ 12 Յունիս:
Զեւեղման արուեստի ցուցահանդէս «Էքրանժ մեխանժ», Միշէլ Թաուրիլի յարգարումի արուեստի գործերը, «Էսփաս Էս. Տէ.» ցուցասրահ, մինչեւ 7 Յունիս:
Նկարչական ցուցահանդէս՝ Ռոգ Հիւսէյնիի գործերը, «Ժանին Ռուպէլ» ցուցասրահ, մինչեւ 11 Յունիս:


ԱԶԳԱԿ 50 ՏԱՐԻՆ ԱՊՄԱՁ 3 Յունիս 1953

ԶԱԽԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՍԵՓԱԿԱՆ
ՇԷՆՔԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԷՍ

(Սեփական թղթակցութիւն «Ազգապ»)
Մայիս 24ին Կիրակի կեսօրէ վերջ ժամը 5:00ին, հոծ բազմութեան մը ներկայութեան, տեղի ունեցաւ Գաախօսութեան Պալ - Թումայի շրջանին մէջ, Ջաւարեան վարժարանի սեփական շէնքի բացման հանդէսը:
Օրուան հանդիսութեան կը նախագահէր Բերիոյ Թեմի ժրջան առաջնորդ եւ շէնքի գլխաւոր նուիրատուներու տեր եւ տիկին Ճորն Մարտիկեաններու ներկայացուցիչը գեր. Ջարեհ Եպ. Փայալեան, որ որոշեալ ժամուր հասցնելով հանդէսին վայրը, պատուակալ հիւրերուն հետ միասին, կտրեց բեմը կապող ժապաւէնը եւ բարձրացաւ մասնաւոր պատրաստուած ամպիոնին վրայ, որ յատկացւած էր Պէլլուրեան, Հալեպեան եւ քաղաքէս պատուոյ հիւրերուն, որոնց մէջ կը գտնուէին Փայալեան եւ Թումայի Պալ: Սինգլիս Վրացեան, Սուրիոյ խորհրդարանի նախկին հայ երեսփոխաններէն պրն. Յարութ Արսլանեան, Հ.Մ.Ը.Մ.ի եւ Ս. Օ. Ռաչի Շրջանային վարչութեանց ներկայացուցիչները եւ քաղաքիս գոյգ բահանայ հայրերը:
Այս շրջիկը եւ նուիրական հանդէսին յայտագրին գործադիր եւ մեր բոլորին սիրելի ընկ. Հ. Փափագեանի հրաւերով հանդէսը բացուեցաւ սուրիական քայլերով, որը ունկնդրուեցաւ յոտնկայս:

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն

ԱՇԽԱՐՀ



ԼՈՒՐԵՐ՝ ԶԱՅՐԵՆԻ ՄԱՐԶԱՇԽԱՐՅԷՆ

● ԱԹԷՆՔԻ մէջ (Յունաստան) վերջ գտաւ կոփամարտի Աթրոփոլիս միջազգային մրցաշարը:

57 քվ. դասակարգին մէջ, Արամ Ռամալեան (Երեւանէն) յաջողեցաւ ոսկի մետալին տիրանալ իր կատարած չորս մրցումներուն ալ յաղթանակներ արձանագրելէ ետք:

60 քվ. դասակարգին մէջ Բագրատ Աւոյեան (Վանաձորէն) եւ 91 քվ. դասակարգին մէջ Մարատ Թովմասեան (Երեւանէն) յաջողեցան տիրանալ պրոնկ մետալներու:

● ՊՈԼՍՈՅ մէջ (Թուրքիա) տեղի ունեցող Եւրոպայի ճատրակի անհատական ախոյեանութեան 3րդ եւ 4րդ հանգրուանի մրցումներէն ետք, հայրենի վարպետներ Աշոտ Անաստասեան, Լեւոն Արոնեան եւ Սմբատ Լպուտեան բաւական լաւ արդիւնքներ կ'արձանագրեն: Անոնք այժմ ունին 2,5ական կէտ: Իսկ Ռաֆայէլ Վահանեան եւ Արտաշէս Մինասեան ունին 2ական կէտ:

Աղջկանց մրցումներուն, Հայաստանի վարպետներէն յաւազոյն արդիւնքը արձանագրած է Լիլիթ Մկրտչեան, 2 խաղէ ետք մէկ կէտ հաւաքելով:

● ԵՐԷԿ, Երեւանի մէջ սկսան Հայաստանի պատ ռճի ըմբշամարտի ախոյեանութեան մրցումները, որոնց իրենց մասնակցութիւնը կը բերեն շուրջ հարիւր ըմբշներ:

ՍՊԱՆԱՑ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՌԷԱԼ ՄԱՏՐՈՏ ԵՒ ՌԷԱԼ ՍՈՍԻԵՏԱՏ ԶԿՐՅԱՆ ՕԳՏՈՒԻԼ ԻՐԱՐՈՒ ԱՐԶԱՆԱԳՐԱԾ ՀԱՆԱՍԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ

Սպանիոյ ֆութպոլի ախոյեանութեան 36րդ հանգրուանի մրցումներուն. առաջին երկու իրիքերը գրաւող խումբերուն՝ Ռեալ Սոսիետատի եւ Ռեալ Մատրիտի միջեւ կէտերու տարբերութիւնը մնաց նոյնը՝ մէկ կէտ (ի սպաստ առաջինին), նկատի ունենալով, որ անոնք երկուքն ալ հաւասարութիւններ արձանագրեցին:

Երրորդ դիրքը գրաւող Տեփորթիօ Քորուսա, որ յաղթանակ մը արձանագրեց, թուրքական հաշիւներով տակաւին յոյս ունի տիտղոսին տիրանալու, որովհետեւ ախոյեանութեան ամբողջական մնացած է երկու հանգրուան միայն եւ անկա չորս կէտով ետ կը մնայ Սոսիետատէն:

Վերջին դիրքին վրայ գտնուող Ռայօ Վայեքանօ իր արձանագրած հաւասարութեանէն ետք եւ Ռեքրեթիօ Հուելվա (18րդ), ինչպէս նաեւ Ալաւես (19րդ) իրենց կրած պարտութիւններէն ետք, պաշտօնապէս փոխադրուեցան Բ. դասակարգ:

Ստորեւ՝ 36րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները.

Տեփորթիօ Քորուսա - Աթլետիկո Մատրիտ	3 - 2
Մայորքա - Ռայօ Վայեքանօ	1 - 1
Ալաւես - Ռեալ Պեթիա	0 - 1
Ռեալ Վայադոլիտ - Օսասունա	0 - 2
Ռեալ Մատրիտ - Սելթա Վիլո	1 - 1
Վիարէալ - Աթլետիկո Գիլպաօ	1 - 1
Պարսելոնա - Մալաղա	2 - 1
Սեւիլլա - Ռեքրեթիօ Հուելվա	1 - 0
Ռեալ Սոսիետատ - Վալենսիա	1 - 1
Ռասինկ Սանթանէր - Էսպանիոլ	5 - 2

Ստորեւ՝ դասաւորումը.	ԿԵՏ
1.- Ռեալ Սոսիետատ	73 (66 - 42)
2.- Ռեալ Մատրիտ	72 (79 - 41)
3.- Տեփորթիօ Քորուսա	69 (63 - 43)
4.- Սելթա Վիլո	58 (42 - 32)
5.- Վալենսիա	57 (52 - 32)
6.- Աթլետիկո Գիլպաօ	52 (59 - 56)
7.- Պարսելոնա	50 (58 - 46)
8.- Սեւիլլա	50 (36 - 33)
9.- Ռեալ Պեթիա	48 (48 - 50)
10.- Մայորքա	48 (47 - 55)
11.- Աթլետիկո Մատրիտ	47 (51 - 49)
12.- Ռասինկ Սանթանէր	44 (50 - 57)
13.- Վիարէալ	44 (41 - 47)
14.- Էսպանիոլ	43 (41 - 46)
15.- Մալաղա	42 (45 - 50)
16.- Ռեալ Վայադոլիտ	42 (34 - 39)
17.- Օսասունա	41 (33 - 41)
18.- Ռեքրեթիօ Հուելվա	34 (34 - 60)
19.- Ալաւես	34 (35 - 63)
20.- Ռայօ Վայեքանօ	31 (31 - 60)

ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ԱՌԵՂՈՒՄԱԾԱՅԻՆ ՐԱՇԻՒՆԵՐ...

Լիբանանի ֆութպոլի Ա. դասակարգի ախոյեանութեան 2002 - 2003 եղանակի մրցումները թէեւ ամբողջական շարքաւորվել են, սակայն ախոյեանին ճակատագիրը, ինչպէս նաեւ Բ. դասակարգ փոխադրուող երկրորդ խումբին ճակատագիրը ցարդ յստակ էն:

22րդ եւ վերջին հանգրուանին, Պրոմօ 3 - 0 արդիւնքով պարտութիւն մը կրելէ ետք Մապարրայէն, պաշտօնապէս փոխադրուեցաւ Բ. դասակարգ՝ գրաւելով 12րդ եւ վերջին դիրքը:

Հակառակ անոր որ անհկա տակաւին երեք մրցում ունի կատարելիք՝ 9րդ, 10րդ եւ 11րդ դիրքերը գրաւող խումբերուն դէմ, սակայն նոյնիսկ եթէ երեք յաղթանակ արձանագրէ՝ յոյս չունի 11րդ դիրքէն աւելի վեր բարձրանալու:

Չորս խումբեր՝ Շապա Սահէլ, Սաժէս, Մալամ եւ Մապարրա 22րդ հանգրուանի մրցումներէն ետք յաջողեցան ապահովել 23ական կէտ: Սակայն առաջին երկուքը, շնորհիւ իրենց կողմը բռնած, ապահովեցին Ա. դասակարգ մնալու իրենց տոմսերը: Պայքարը այժմ պիտի ըլլայ

վերջին երկուքին եւ Ախա Ալիի Ալէյի միջեւ: Այս վերջինին յոյսերը շատ չնչին են, որովհետեւ երեք մրցումէ պարտութիւն մը կրելու պարագային, Ալէյի կազմը Պրոմօ հետ միասին պիտի փոխադրուի Բ. դասակարգ: Ինչ կը վերաբերի ախոյեանին, այդ մէկը եւս կը մնայ անորոշ, սակայն կ'ենթադրուի, որ պայքարը ըլլայ բաւական սուր՝ պարտազուտի դիրքը գրաւող Օլիմպիկի եւ 2րդ դիրքին վրայ գտնուող Նրժմէի միջեւ: Ահտ (3րդ) շատ չնչին յոյս ունի տիտղոսին տիրանալու, մինչ 4րդ դիրքը գրաւող Անասար 3րդ դիրքէն աւելի վեր բարձրանալու յոյս չունի:

Ստորեւ՝ 22րդ եւ վերջին հանգրուանի մրցումներուն արդիւնքները.	1 - 1
ԹատանՍ Սուր - Անասար	0 - 2
Սաժէս - Օլիմպիկ	0 - 3
Պրոմ - Մապարրա	3 - 0
Շապա Սահէլ - Մաֆա	2 - 1
Մալամ - Ախա Ալէյ	2 - 1
Նրժմէ - Ահտ	2 - 1

Ստորեւ՝ դասաւորումը, 22րդ հանգրուանի մրցումներէն ետք (ընդր խումբերն ալ կատարած են 22ական մրցում).	Յ.	Հ.	Պ.	ՆՇ.	ՍՏ.	ԿԵՏ
1.- Օլիմպիկ	16	3	3	39	12	50
2.- Նրժմէ	14	5	3	43	22	47
3.- Ահտ	13	4	5	36	19	43
4.- Անասար	9	10	3	32	19	37
5.- Թ. Սուր	8	8	6	30	27	32
6.- Մաֆա	7	6	9	25	31	27
7.- Շ. Սահէլ	5	8	9	29	34	23
8.- Սաժէս	5	8	9	25	32	23
9.- Մալամ	6	5	11	29	37	23
10.- Մապարրա	5	8	9	25	34	23
11.- Ախա	4	4	14	17	38	16
12.- Պրոմ	5		15	21	46	11

ՖՈՒԹՊՈԼԻ ՄԻԶՅԱՄԱՔԱՄԱՍԱՅԻՆ ՄՐՑԱՇԽԱՐՔԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Յառաջիկայ Յունիս 18էն 29 Ֆրանսայի մէջ տեղի պիտի ունենայ ֆութպոլի կարեւոր մրցաշարը մը՝ «Միջցամաքամասային բաժակ», որուն իրենց մասնակցութիւնը պիտի բերեն Միացեալ Նահանգներ, Թուրքիա, Ճափոն, Քուվեյթ, Սոր Զելանտա, Քամբոճի, Պրայիլ եւ հիւրընկալ Ֆրանսա: Անոնք բաժնուած պիտի ըլլան երկու խմբակի: Առաջին երկու դիրքերը գրաւողները պիտի ապահովեն կիսաարտական հանգրուանին տոմսը:

Պրայիլի ֆութպոլի ազգային խումբին մարզիչը՝ Քարլոս Ալբերթ Փարէյրա երկէ րաւ, որ իր կազմին պիտի բացակային Պայէրն Միւնխի միջնապահ Ջէ Ռոպերթօ, Ռեալ Մատրիտի լեռնապահ Ռոպերթօ Քարլոս եւ յառաջապահ Ռոնալտօ:

Իր կարգին, Ֆրանսայի մարզիչ ժաք Սանթիսի յայտարարեց, թէ իր կազմին առժամանակ պիտի բացակային Ռեալ Մատրիտի մարզիչներ Ջիւստին Զիտան եւ Քլոտ Մաքելէյէ, նկատի ունենալով որ անոնք իրենց պարտութիւններէն ետք ալիւմինի հետ Սպանիոյ ախոյեանութեան մրցումներուն կը մասնակցին: Անոնք Ֆրանսայի ազգային խումբին կրնան միանալ Յունիս 22էն ետք միայն:

Ֆրանսայի խումբին մաս պիտի կազմեն ոչ «անգլիացի» մարզիկներ, ինչպէս նաեւ Աթլետիկո Գիլպաօի 26 տարեկան միջնապահ Ռաման Զատօ, որ առաջին անգամ ըլլալով առիթը պիտի ունենայ կրելու ազգային խումբին շապիկը: Մասնիկի համաձայն, ֆութպոլի «Միջցամաքամասային բաժակ»ի ալ մրցաշարը լայնազոյն պատրաստութիւնը պիտի ըլլայ գալ տարի տեղի ունենալիք Եւրօ-2004 մրցաշարին, որ տեղի պիտի ունենայ Փորթուգալի մէջ:

Ֆրանսայի խմբակին մաս կը կազմեն Քուլմպիա, Սոր Զելանտա եւ Ճափոն, իսկ Պրայիլի խմբակին՝ Թուրքիա, Միացեալ Նահանգներ եւ Քամբոճի: Այդ 16 մրցումները տեղի պիտի ունենան «Սթալ Տր Գրանտի», Լիոնի եւ Սէնթ Էթիենի դաշտերուն վրայ: Ստորեւ՝ Սանթիսի կողմէ նկատի առնուած մարզիկները.



Ռոնալտօ Ե...

Ֆրանսայի ֆութպոլի ազգային խումբին մարզիչը՝ Քարլոս Ալբերթ Փարէյրա երկէ րաւ, որ իր կազմին պիտի բացակային Պայէրն Միւնխի միջնապահ Ջէ Ռոպերթօ, Ռեալ Մատրիտի լեռնապահ Ռոպերթօ Քարլոս եւ յառաջապահ Ռոնալտօ:



... Տաիտ Թեթեկե՝ մրցաշարին մեծագոյն բացակացերը

Պի պիտի ունենայ Փորթուգալի մէջ: Ֆրանսայի խմբակին մաս կը կազմեն Քուլմպիա, Սոր Զելանտա եւ Ճափոն, իսկ Պրայիլի խմբակին՝ Թուրքիա, Միացեալ Նահանգներ եւ Քամբոճի: Այդ 16 մրցումները տեղի պիտի ունենան «Սթալ Տր Գրանտի», Լիոնի եւ Սէնթ Էթիենի դաշտերուն վրայ: Ստորեւ՝ Սանթիսի կողմէ նկատի առնուած մարզիկները.

ՊԱՏԵՆԹՊՈԼ. ԼԻԲԱՆԱՆԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՎԱՂԸ ՌԻԱՏԻ - ՍԱԺԵՍ ԱՒԱՐՏԱԿԱՆ ԶՈՐՐՈՐԴ ՃԱԿԱՏՈՒՄ

Լիբանանի տղոց պատեթպոլի ախոյեանութեան ամբողջական մրցումին չորրորդ ճակատումին, վաղը՝ Չորեքշաբթի, իր դաշտին՝ Մասարայի մէջ, Ռիատի կը հիւրընկալէ Սաժէսը: Մրցումը տեղի պիտի ունենայ ժամը 20:45ին:

«Կանայններուն» յաղթանակին պարագային ախոյեանին ճակատագիրը պիտի վճռուի, որովհետեւ անիկա այժմ 2 - 1 արդիւնքով կը յառաջանայ Ռիատի վրայ: Երրորդ մրցումին Սաժէս յաջողեցաւ 83 - 73 արդիւնքով պարտութեան մատնել Ռիատին, մինչ արդիւնքը կ'ընթանար 1 - 1:

ԹԵՆԻՍ. ՌՈՒԱՆ ԿԱՐՈՍ

ՍՊԱՆԱՑԻՔ ԿԸ ՏԻՐԱՊԵՏՆԷՆ

Ֆրանսայի մէջ տեղի ունեցող թենիսի Ռոնալտօ Կարոս մրցաշարին, տղոց Դ. հանգրուանի մրցումներուն մեծագոյն անակնկալները ստեղծեց 28րդ դասուած սպանացի Թոմի Ռոպերտօ, որ դուրս ձգեց երեք անգամ տիտղոսին արձանագած (1997, 2000 եւ 2001) պրայիլի Կուրթա Քուէրթէնը, արձանագրելով՝ 6 - 4, 1 - 6, 7 - 6 եւ 6 - 4 արդիւնքով յաղթանակ մը:



Կիլերմօ Զորիա

Քառորդ ամբողջականի մրցումներուն, ան վաղը պիտի ճակատի իր ազգակիցին՝ Ալպէր Բոսթայի դէմ, որ 6 - 2, 7 - 5 եւ 7 - 5 արդիւնքով պարտութեան մատնեց ֆրանսացի Անտօ Քլեմանը:



Թոմի Ռոպերտօ


Այս տարի տիրական ներկայութիւն են սպանացի մարզիկները, նկատի ունենալով որ վերջին հանգրուան (քառորդ ամբողջական) հասնող ութ մարզիկներէն չորսը իրենք են: Արժանթինցի Կիլերմօ Զորիա, որ Դ. հանգրուանին 6 - 4, 7 - 6, 5 - 7, 6 - 7 եւ 6 - 3 արդիւնքով պարտութեան մատնեց իր ազգակիցը՝ Մարիանօ Չապալէթան, քառորդ ամբողջականին այսօր ունի բաւական դժուար մրցում մը, երբ ճակատի ամերիկացի Անտոնի Ալպարէզ դէմ:

Այսօր տեղի կ'ունենայ նաեւ տղոց քառորդ ամբողջականի երկրորդ մրցումը՝ հոլանտացի Մարթին վերթեյրթի եւ սպանացի Քարլոս Մոյալի միջեւ:

Վաղը տեղի կ'ունենայ նաեւ (Քուրթա - Ռոպերտօ մրցումէն բացի) քառորդ ամբողջականի վերջին ճակատումը՝ սպանացի Կուրթա Քուէրթէնի եւ չիլիցի Ֆեռնանտօ Կոնպալէի միջեւ: Ստորեւ՝ այսօր տեղի ունենալիք աղջկանց քառորդ ամբողջականի մրցումներուն յայտագիրը (Քորիա - Ալպարէզ եւ վերջերք - Մոյալ մրցումներէն բացի): Նշենք, թէ մրցումները կը սկսին ժամը 13:00էն սկսեալ:

Նատիա Փեթրովա (Ռուսիա) - 22.- Վերա Չվուարեւա (Ռուսիա)
1.- Սերենա Ուիլիզմ (Մ. Ն.) - 5.- Ամէլի Մօրեանօ (Ֆրանսա)
24.- Քոնչիթա Մարթինէս (Սպանիա) - 2.- Քիմ Բիլիպրոկ (Պէլճիքա)
4.- Ժիւսթին Հենէն (Պէլճիքա) - 8.- Զանտա Ռուպին (Մ. Ն.)
● ԹԵՆԻՍԻ աշխարհի մէջ հանրածանօթ, սակայն ոչ իբրեւ փայլուն արդիւնքներ արձանագրող, այլ՝ իբրեւ թօփ մօտէլ բոլորին ուշադրութիւնը իր վրայ կեդրոնացնող ռուս Աննա Բոլնիշվիլա պատկանէ սպանացի երգչի եւ դերասան Էնրիքէ Իկելիասի հետ: Էնրիքէ պատկան է հանրածանօթ Խուլիոյի:

ԷՅ. ՊԻ. ԱՅ.Ի ՏԵՍՈՐԵԼԸ ԿԸ ԳՆԱՅԱՍՏԷ ՍԵՌՏԱԿԱՆ ԱՐԱԲԻՈՅ ԶԱԿԱՌԱՐԵԿՎԱԿԱՆ ԾԻԳԵՐԸ



ԲԻՍ, 2 (ԱՅՓ).- ԷՅ. ՊԻ. ԱՅ.Ի տնօրեն Թոպրի Միլլերը գնահատել է Երևանի Արաբիոյ հակահարձակական ծիգերը, որոնք յաջորդեցին 12 Մայիսի անվտանգության կազմակերպչական գործողություններին: Միլլերը ըստ, որ Թիատ մեծ ծիգերի գործը դրած է պայքարելու համար ահաբեկչական շարժումներու դեմ և սանձելու համար պանոս: Միլլերը երկօրեայ պայքարի մը համար Թիատ կը գտնուի, սեղուական իշխանություններուն հետ համակարգելու համար ահաբեկչական խմբակներու դեմ պայքարի ծիգերը:

Ամերիկացի պաշտօնատար տեսակցություններ ունեցաւ ներքին գործոց նախարար Իշխան Նայիջ Պըն Ապոտիլայի կի ի և այլ պաշտօնատարներու հետ: Միս կողմէ, սեղուական պահովութեան ուժերը կը շարունակեն պայքարը ահաբեկչական ցանցերու դեմ: Ապահովութեան ուժերը արտակարգ միջոցառումներու ձեռնարկած են, յատկապէս Մեդոնայի մէջ ցանցի մը յայտնաբերումէն ետք: Յիշեալ շրջանին մէջ, պահովութեան ուժերը շարաքաղերջին բախում ունեցած էին փինեայներու հետ:

ԹԻՔԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՍՊԱՅԱԿՈՅՏԻ ՊԵՏԸ ԿՂԱՄԲԱՍՏԱՆԷ Ե. ՄԻՈՒԹԻԻՆԸ

ԱՆԳԱՐԱ, 2 (ԱՅՓ).- Թիքական բանակը Երևանի քաղաքի օր ամբաստանած է Երոպական Միությունը՝ քիրտ ընթացումը «ահաբեկչական գործունէությունը» քաջալերելու յանցանքով: Սպայակոյտի պետ գոր. Հիլմի Էօպըք համագումարի մը ընթացքին ըսած է. «Կը կարծեմք, որ ՔԱԿ-ՔԱՍԷՔի ահաբեկչութեան դեմ միջազգային միացեալ մտեցում մը պիտի որդեգրուի Մեպոնմբեր 11ի յարձակումներէն ետք»: «Սակայն կը ցանկ ըսելու, որ ՔԱՍԷՔի ահաբեկչութեան դեմ իրապաշտ որեւէ պորակցություն չտեսանք», աւելցուցած է ան: Չորավարը խտի քննադատած է Ե. Միությունը, որ ՔԱՍԷՔը, որ ՔԱԿի հետ նոյն «քստը» էրը եւ պայքար մղող անվտանգությունները կը բաժնեկցի, ահաբեկչական կազմակերպություններու իր ցանկին վրայ չէ դրած:

ՊՈՒՇ ԵՒ ՊԼԵՐ ԿԸ ԽՈՍՏԱՆԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒԹՅԵԼ ԻՐԱՔԸ

Իրաքի մէջ փոխանցման հանգրուանի իշխանութիւնը պիտի հաստատուի վեց շաբթուան ընթացքին: Դաշնակից ուժերու հրամանատարութիւնը ու քաղաքային իշխանութիւնը պիտի նշանակեն խորհուրդ մը՝ խորհրդակցություններ կատարելէ ետք իրաքեան այլապէս շարժումներու եւ թելերու ներկայացուցիչներու հետ: Յիշեալ խորհուրդը իր կարգին պիտի նշանակէ կառավարութիւնն ու նախարարները: Խորհուրդը պիտի ունենայ խորհրդատուի մարմինի հանգամանք: Անկախ խորհրդատուներ պիտի նշանակէ իրաքեան բոլոր նախարարութիւններուն համար: Այս խորհրդատուներուն պիտի տրուին այնքան լայն իրաւասութիւններ, որ պանոսը պիտի դարձնէ փոխանցման հանգրուանի նախարարներ: Դաշնակից ուժերու քաղաքային իշխանութեան մէկ պաշտօնատարը հերքեց այն անբաստանութիւնները, թէ փոխանցման հանգրուանի կառավարութեան նշանակումը դիտումնաւոր կերպով կ'ուշանայ: Պաշտօնատարը շեշտեց սակայն, որ փոխանցման կառավարութիւնը գերիշխած պետութիւն մը պիտի չլլայ եւ թէ դաշնակիցներուն քաղաքային իշխանութեան պիտի վերապահուի այդ հանգամանքը, մինչէ որ իշխանութիւնը յանձնուի ժողովրդավար ընտրություններու միջոցով հաստատուելիք կառավարութեան:

ՊՈՒՇ ԵՒ ՊԼԵՐ ԿԸ ԽՈՍՏԱՆԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒԹՅԵԼ ԻՐԱՔԸ

Միացեալ Նահանգներու նախագահ ձորձ Պուշ եւ Բրիտանիոյ վարչապետ Թոնի Պլէր խոստացան յանձնառու մնալ Իրաքը վերակառուցելու ծրագիրին: Պուշ եւ Պլէր, որոնք Ֆրանսա կը գտնուին Ութերու խմբակի վեհաժողովի անդամ, առանձին հանդիպում մը ունեցան խորհրդակցելու համար Իրաքի մասին: Պլէր Պուշի վեկուցեց անցեալ շաբթուան մէջ Իրաք կատարած այցելութեան մասին: Ան Պուշի ըստ, որ Իրաք մեծ օժանդակություններու կը կարօտի վերաշինելու համար: Երկու ղեկավարները խոստացան ամէն ձեւով օժանդակելու վերականգնելու համար Իրաքը: Միս այդ, Սատամ Հիւսեյնի տապալումէն ետք առաջին անգամ ըլլալով, իրաքցիներ երէկ սկսան ուտեստեղէնի քաժնեշափեր ստանալ ՄԱԿի Ուտեստեղէնի Համաշխարհային Ծրագիրին հովանաւորութեամբ: ՄԱԿի յիշեալ գործակալութիւնը յայտնեց սակայն, որ Պաղտատի վեց քաղամասերուն մէջ 10 հազար հոգի միայն ուտեստեղէն ստացաւ: Բանքեր մը ըսաւ, որ ամբողջ ուտեստեղէնը ցրուելու համար երկու շաբթ անհրաժեշտ է:

Միս կողմէ, Իրաքի հաւաքական վէտերու գոյութեան մասին ծայր տուած տարակարծությունները տակաւին չեն փաստուած, հակառակ անոր որ Լոնտոն եւ Ռաշինկթըն կը պնդեն, որ սիւլ տեղեկություններ չեն հրապարակած: Ռուսիոյ արտաքին գործոց փոխ նախարար Եուրի Ֆետոթով կոչ ուղղեց Ռաշինկթընի միանգամընդմիջ փակելու վէտերու թղթածարը՝ յստակ տեղեկություններ փոխանցելով անոր մասին: Ֆետոթով դիտել տուաւ, որ Ռուսիա կը նկատէ, թէ այդ թղթածարը տակաւին բաց է եւ ընդունելի եզրակացություններ մը չէ յանգած: Ֆետոթով աւելցուց, որ Իրաքի մէջ կացութիւնը փոփոխութեան ենթարկուած է եւ ժամուկ ղչիւն կայ, հետեւաբար դաշնակից ուժերը պէտք չէ շուտով եզրակացնեն հաւաքական քանդումի վէտերուն թղթածարը: Պլէր երէկ վերստին շեշտած էր, որ հաստատ կը մնայ այն համոզումն զի, թէ Իրաքի դեմ յայտարարուած պատերազմի նախօրեակին, Պաղտատ կարողութիւնն ու կարելիութիւնը ունէր հաւաքական քանդումի վէտեր գործածելու՝ սպառնալով ամբողջ աշխարհին: Ան ընդգծեց, որ անընդունելի են այն բոլոր ենթադրությունները, թէ Լոնտոն եւ Ռաշինկթըն կեղծ փաստեր հրապարակած են՝ արդարացնելու համար պատերազմի որոշումը:

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուըլ եւս կրկին շեշտեց, որ գոյութիւն ունին անհերքելի փաստեր, որոնք կը հաստատեն, թէ Իրաք հաւաքական քանդումի վէտեր ունէր Սատամ Հիւսեյնի իշխանութեան ներքե: «Չէնքերու գոյութիւնը որեւէ մէկուն երեւակայութեան ծնունդը չէր», աւելցուց Փաուըլ:

(ԱՅՓ)

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

Շարունակուած Յոր էջէն շեշտուեցաւ ժողովրդավարութեան անհրաժեշտութիւնը՝ պատերազմներու հարցը վերջնականապէս լուծելու գծով: ՊԱՂԵՍԻՆԻ հարողակցութեան հարցերու նախարար Ազգամ Ահմատ, որ կը գտնուի Լիբանան, երէկ այցելեց հանրապետութեան միւլթի շէյխ Մուհամետ Ռաշիդ Քալիլի պալատին, շիններու գերագոյն խորհուրդի փոխ նախագահ միւլթի շէյխ Ապտիլ Էմիր Քալիլի եւ Քալիլի պալատին եւ Քալիլի պալատին:

Advertisement for AFHIL home medical equipment services. Includes a wheelchair image and list of services like Wheelchair, Walker, Electric Bed, Manual Bed, Water Mattress, Cans, Sticks, Serum Tripod, Walking Frame, Over Bed Table, All Kinds Of Oxygen, Laboratory service, Physiotherapist, Nurses Aids, P.T.S. (AMBULANCE). Contact: 24255677.

Երեւանի քաղաքի այցելեց Դաւանալու, որ հանդիպում մը ունեցաւ Սուրիոյ փոխ նախագահ Ապտիլ Հալիմ Խատուամի հետ: Ընդհանուր առմամբ զարմանալի էր զարգացումները: Խալիմ այցելեց նաեւ Լիբանանի մէջ սուրիական ուժերու հրամանատար գոր. Ռըքոն Ղալալի:

Հ. Յ. ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ...

ՄԱՊԵՐՔ ԲՈՅՆԱՆԻ ԺՐԱԳԻՐԻՆ ՎՐԱՅ: Տարօրինակ նկատելով Հայաստանի վարչապետ Անդրանիկ Մարգարեանի այն յայտարարութիւնը, թէ Հայաստանի Կուսակցութիւնը մտադիր չէ պաշտպանութեան նախարարութիւնը պիշիլ որեւէ մէկուն, Աղուն վարդանեան ըսաւ, թէ պաշտպանութեան նախարարի պաշտօնին մասին ոչ մէկը ըսած է, թէ անկախ Հանրապետական Կուսակցութեան կը պատկանի: Հ. Յ. Ա. կը ներկայացուցիչները տեղեկացուցին, թէ Հ. Յ. Ա. թի 30, 50 եւ 56 ընտրատարածքներու արդիւնքներուն գծով պիտի բողոքէ Սահմանադրական Դատարանին, իսկ այն ընտրատարածքներուն մէջ, ուր ընտրությունները անվաւեր նկատուած են, Հ. Յ. Ա. կը պահանջէ արդար եւ քախանցիկ վերընտրություններ: Ինչ կը վերաբերի Սահմանադրական բարեփոխումներուն, Հ. Յ. Ա. կը ներկայացուցիչները նշեցին, թէ կուսակցութիւնը հետամուտ պիտի ըլլայ նոր հանրաքուէի կայացման, ինչպէս նաեւ ընտրական օրէնսգիրքի բարեփոխման, յատկապէս մեծամասնական ընտրակարգի ջնջման նպատակով, որովհետեւ հիմնական խախտումները հոն է, որ տեղի կ'ունենան:

ՊՈՒՇ ՖՐԱՆՍԱՅԵՆ ՄԵԿՆԵՑԱԻ ԵՐՈՊԱՅԻ ՀԵՏ ՍԱՌԵ ԶԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԳԾՈՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՈՉԻՆՉ ԸՆԵԼՈՎ

Մ. Նահանգներու նախագահ ձորձ Պուշ երէկ Ֆրանսա իր կարճատեւ այցելութիւնը աւարտեց՝ ժպիտներու ետին յստակ պատգամով մը. Իրաքի հարցով ստեղծուած դիւանագիտական յարաբերութիւնները, Երոպայի հետ որեւէ մերձեցում իր պայմաններով պէտք է ըլլայ: Պուշ, որ մասնակցած էր աշխարհի ամէնէն աւելի ճարտարարուեստականացած երկրներուն Էվիանի վեհաժողովին, հանդիպումներու ետք Երոպայի բանալի ղեկավարներու հետ կանուխ մեկնած էր Էվիանէն՝ կեդրոնական իրաւար Միշին Արեւելքի խաղաղարար ծիգերուն վրայ: Միսն Ֆրանսա շեշտեց, թէ Պուշի կանխահաւ մեկնումը չի նկատուիր իբրեւ Էվիանի վեհաժողովին «անտեւումը», անկախ սակայն յստակ ցուցանիշ էր, թէ Պուշի համար առաջնահերթութիւնները ինչ են:

Սպիտակ Տան ղեկավարը յարգած է իր խոստումը՝ վեհաժողովը բախումի մը չվերածելու իմաստով: Միաժամանակ սակայն ան մեծ բան չէ ըրած Երոպական երկու ուժերուն՝ Ֆրանսայի եւ Գերմանիոյ հետ ստոն յարաբերությունները արագօրէն բարելաւելու համար: Ան երէկ Էվիանի մէջ Ֆրանսայի նախագահ Ժաք Շիրաքի եւ Գերմանիոյ վարչապետ Կերհարտ Շրէտրըրի հետ միայն ձեռնուած է կատակած է: Պուշ ըսած է սակայն, թէ յարաբերություններ «դժուար ժամանակաշրջանէ մը» անցած են: Ան իր շրջապատը օգտագործած է հերքելու Երոպական թերահաւատությունը՝ Իրաքի դեմ պատերազմի ձեռնարկած ըլլալու իր պատճառներուն գծով, հաւաքական բնաջնջումի վէտեր չգտնուելէն ետք:

«Անկախ մեր բոլորին համար միանալու ժամ է՝ ի խնդիր պատուութեան պաշտպանութեան», ըսած է նախագահը Ուրբաթ օր, Լեհաստանի մէջ: Ան նաեւ կոչ ուղղած է Երոպայի, որ ամերիկեան քաղաքականութիւնը որդեգրէ՝ արդիւնեան բարգաւաճման, ծինային այլաբերումի ենթարկուած բոյսերու եւ կենսոյոթի հարցերուն գծով: Մէկ խօսքով, Երոպական պետությունները, որոնք ընդհանրական սպառնալիքները Պուշի ձեռով կը տեսնեն, կրնան Ռաշինկթընի հետ յայտարարություններ ակնկալել, իսկ միսները կրնան «ոխ»ը առնել այլ ձեւով մտածելու: Շիրաք, մինչ այդ, Կիրակի օր դարձեալ խօսած է աշխարհի «բազմաբեկտային» իր տեսլականին մասին, ըսելով, թէ հոն պէտք չէ միակ ուժ մը տիրապետել: Ան յայտնանդերձ Պուշի հետ իր խօսակցությունը «շատ դրական» որակած է:

Սպիտակ Տան բանքեր Արի Ճլայշըր հակադարձած է, ըսելով. «Մենք դաշնակիցներ ենք, իրարու հետ իբրեւ գործակիցներ կը վարուինք, առանց բեւեռներ նկատի ունենալու»: ԱՍԵՐԻԿԵԱՆ ՍԱՍՈՒԼԸ ԻՐ «ՍՈՒՏԵՐՈՒՆ» ՍԽԱԼԸ ՊԻՏԻ ՏԵՍԷ

Միս կողմէ, Ֆրանսայի պաշտպանութեան նախարար Միշիլ Ալիօ - Մարի երէկ յայտնած է, թէ ամերիկեան մամուլը «սուտեր եւ սիւլ ամբաստանություններ» հրատարակած է Ֆրանսայի մասին՝ Իրաքի պատերազմին գծով, սակայն անկախ մօտ տեսնեն իր սիւլային պիտի անդրադարձայ: Պաիլէյն այցելութեան մը ընթացքին, ան թղթակիցներու դիտել տուած է, որ Մ. Նահանգներու նման ժողովրդային մեծ երկրի մը մամուլը պէտք է ուշադիր ըլլայ ստուգելու տեղեկությունները եւ սիւլ բաներ չըսէ՝ գիտակցօրէն կամ ոչ:

Նախապէս Ալիօ - Մարի ամբաստանած է ամերիկեան մամուլը՝ երկու երկիրներուն յարաբերությունները պատեղեկատուական արշաւի մը ճամբով թունաւորելու յանցանքով: (ԱՅՓ)

ԱՅՍՕՐ ԵՒ ՎԱՂԸ ՏԵՂԻ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՆ ՄԻՋԻՆ ...

Շարունակուած Ա. էջէն Գեր հաղորդեցին, որ Իսրայէլ աւելի քան 10 հազար պաղեստինցի գործատրներու մուտքը արտօնած է երկ: ՅՈՎՀԱՆՆԵՍ ՊՕՂՈՍ Բ. պապը ընդգծեց, որ Միշին Արեւելքի մէջ վայրագութեան վերջ կը տրուի միայն այն ատեն, երբ Իսրայէլի կողմից կը հաստատուի պաղեստինցեան անկախ պետութիւն մը: Պապը կը խօսէր Փառլիի հետ հանդիպումի մը արատիտի: ՊԱՂԵՍԻՆԵԱՆ իշխանութեան նախագահ Եստր Արաֆաթ ցոր ընդհանուր դատախազ մը ճշմանակեց երկ: Հիւսեյն Ապու Ասի դարձաւ ընդհանուր դատախազ, իսկ Չուեկը Սուտանի՝ Գերագոյն ատենալի գլխատր դատարար: ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ատենալի մը կողմէ դատավարութեան ենթարկուող Մարուան Պարրուքի պահանջեց, որ Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոնի կառավարութիւնը ներողութիւն խնդրէ Այսրայողանանի եւ Կազախի 36 տարուան գրաման համար: (ԱՅՓ)